



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 16 » օգոստոսի 2017 թվականի

N: 261-Ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված ֆինանսական աուդիտի 2017 թվականի հուլիսի 17-ի հաշվետվությունը և հաշվի առնելով «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2017 թվականի օգոստոսի 1-ի գրավոր բացատրությունը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրիգոր Հարությունյանին հայտարարել նկատողություն:

2. «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրիգոր Հարությունյանին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ նմանօրինակ խախտումներն այսուհետ բացառելու նպատակով:



Իսկականի հետ ճիշտ է

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ